



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2010թ. հունվարին /վերլուծություն/

2010թ. հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 8131 գործարք, որոնց քանակը 2009թ. հունվարի համեմատ աճել է 11.7%-ով, իսկ 2009թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 52.9%-ով:

2010թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2437 օտարման գործարքների 81.5%-ը կազմել են առուվաճառքները, 17.4%-ը՝ նվիրատվությունները և 1.1-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 33.1%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 32.5%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2010թ. հունվարին, 2009թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 46.7%-ով, իսկ 2009թ. հունվարի համեմատ աճել՝ 7.5%-ով:

2010թ. հունվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 62.2%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2010թ. հունվարին, 2009թ. դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 54.2%-ով, իսկ 2009թ. հունվարի համեմատ աճել՝ 35.2%-ով:

2010թ. հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հունվար 2009թ.	հունվար 2010թ.	դեկտեմբեր 2009թ.
Կենտրոն	499800	473300	472300
Արաբկիր	362100	370800	370800
Քանաքեռ-Զեյթուն	282300	283300	280900
Նոր-Նորք	254300	232400	230500
Ավան	259100	232800	231800
Էրեբունի	270200	246200	245400
Շենգավիթ	260500	247700	245600
Դավթաշեն	288200	267800	265700
Աջափնյակ	246200	237000	234800
Մալաթիա-Սեբաստիա	238100	234700	233800
Նուբարաշեն	152600	142200	142200
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	283000	269800	268500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. հունվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2009թ. դեկտեմբերի համեմատ, աճել են 0.5%-ով:

2010թ. հունվարին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 212 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 50.0%-ով, իսկ 2008թ. հունվարի համեմատ աճել՝ 7.6%-ով:

2010թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունվար 2009թ.	հունվար 2010թ.	դեկտեմբեր 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	143000	142000	139100
	Ապարան	37000	44800	44800
	Թալին	48200	51300	51300
Արարատ	Արտաշատ	97100	94500	92600

	Մասիս	146600	122800	121600
	Վեդի	88400	91700	91700
	Արարատ	78500	90000	88300
Արմավիր	Վաղարշապատ	163300	157000	157400
	Արմավիր	112000	121100	118700
	Մեծամոր	88800	81200	79800
Գեղարքունիք	Սևան	102600	92800	91700
	Գավառ	51100	44300	43700
	Մարտունի	73300	82600	82600
	Վարդենիս	33500	31900	31500
	Ճամբարակ	17300	18900	18900
Լոռի	Վանաձոր	102700	91200	92900
	Ստեփանավան	52300	57100	57100
	Մայիսակ	65400	78300	77500
	Ալավերդի	33200	30900	31600
	Տաշիր	33500	34900	34900
	Թումանյան	5600	6100	6100
	Շամլուղ	3200	3400	3400
	Ախթալա	13000	14100	14100
Կոտայք	Աբովյան	159800	158700	155400
	Նոր Հաճն	134200	125800	129100
	Բյուրեղավան	106000	103400	103400
	Եղվարդ	121500	117400	120700
	Հրազդան	75400	62000	61000
	Ծաղկաձոր	172500	181500	181500
	Չարենցավան	97700	78200	77700
Շիրակ	Գյումրի	120700	118400	116400
	Արթիկ	64600	57400	56800
	Մարալիկ	30700	30600	30200
Սյունիք	Գորիս	114600	137400	140300
	Կապան	102700	99600	100200
	Սիսիան	88500	80000	80800
	Մեղրի	52200	57900	57000
	Ագարակ	31400	32800	32800
	Քաջարան	55800	59700	59700
	Դաստակերտ	7000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	83800	70000	70000
	Եղեգնաձոր	106400	107800	110100
	Զերմուկ	145300	110200	108500
Տավուշ	Դիլիջան	106000	94500	92800
	Իջևան	152100	137300	135100
	Բերդ	40600	42000	42000
	Նոյեմբերյան	31200	33400	33400
	Այրում	21100	24000	24000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. դեկտեմբերի համեմատ աճել են 0.3%-ով:

2010թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 299 առուվաճառքների գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 78, մարզերում միասին վերցրած՝ 221: 2010թ. հունվարին, 2009թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 36.6%-ով, ընդ որում, Երևանում՝ 42.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 34.4%-ով: 2009թ.

հունվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 6.0%-ով, ընդ որում, Երևանում՝ 62.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել 5.6%-ով:

2010թ. հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հունվար 2009թ.	հունվար 2010թ.	դեկտեմբեր 2009թ.
Կենտրոն	510000	481100	476600
Արաբկիր	426700	376900	374500
Քանաքեռ Զեյթուն	322900	286700	284500
Նորք Մարաշ	314100	283200	282000
Ավան	286200	236400	234800
Էրեբունի	291500	249800	247800
Շենգավիթ	291900	249800	247800
Դավթաշեն	324500	273900	270400
Աջափնյակ	292400	240700	237700
Մալաթիա-Սեբաստիա	287200	239500	236300
Նուբարաշեն	172300	146400	146400
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	320000	278600	276300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. հունվարին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը, / 2009թ. դեկտեմբերի համեմատ, աճել են 0.8%-ով:

2010թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունվար 2009թ.	հունվար 2010թ.	դեկտեմբեր 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	145400	144100	141700
	Ապարան	38900	47100	46900
	Թալին	49000	53400	52400
Արարատ	Արտաշատ	108000	97600	94800
	Մասիս	148800	124900	123900
	Վեդի	91900	94200	93400
	Արարատ	79200	91500	89500
Արմավիր	Վաղարշապատ	177000	165100	165900
	Արմավիր	128100	123200	121200
	Սևան	107500	94300	93400

Գեղարքունիք	Գավառ	56000	46500	46200
	Մարտունի	78200	85800	85300
	Վարդենիս	37500	34200	34100
	Ճամբարակ	22000	21100	21000
Լոռի	Վանաձոր	110200	96000	96400
	Ստեփանավան	54600	60900	60600
	Սպիտակ	68000	79500	78900
	Ալավերդի	36800	34800	34800
	Տաշիր	38200	38200	37600
	Թումանյան	10400	10400	10300
	Շամլուղ	7400	7400	7400
	Ախթալա	16200	18200	18200
Կոտայք	Արսիվյան	185200	161600	157600
	Նոր Հաճն	145100	134100	136100
	Բյուրեղավան	122200	107600	105400
	Եղվարդ	133700	128100	127900
	Հրազդան	81500	64000	63200
	Ծաղկաձոր	276000	303100	299500
	Չարենցավան	104400	80100	80100
Շիրակ	Գյումրի	125900	121400	118900
	Արթիկ	65800	60700	60700
	Մարալիկ	32700	31600	31500
Սյունիք	Գորիս	127000	143500	143100
	Կապան	112400	103700	104300
	Միսիան	91100	84400	84300
	Մեղրի	53800	59400	59100
	Ագարակ	33400	34700	34700
	Դաստակերտ	10400	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	87700	73700	73500
	Եղեգնաձոր	111800	113500	114300
	Ջերմուկ	103500	114400	112600
Տավուշ	Դիլիջան	115600	98900	96900
	Իջևան	154200	139300	136700
	Բերդ	42600	43800	43600
	Նոյեմբերյան	36700	35100	35100
	Այրում	23000	25800	25800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2009թ. դեկտեմբերի համեմատ, աճել են 0.8 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2010թ. հունվարին հանրապետությունում օտարվել են 970 միավոր /627.49 հա/ հողեր, որից Երևանում` 53 միավոր /32.46 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 542 միավոր /552.42 հա/, որից Երևանում` 4 միավոր /0.40 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 292 միավոր /26.47 հա/, որից Երևանում` 29 միավոր /1.10 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 118 միավոր /41.99 հա/, որից Երևանում` 20 միավոր /30.97 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 8 միավոր /1.89 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 6 միավոր /4.57 հա/,

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 4 միավոր /0.15 հա/:

2010թ. հունվարին հանրապետությունում օտարված հողերից 872 միավորի /601.68 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 45 միավոր /32.16 հա/, նվիրատվության գործարքներ՝ 83 միավորի /23.66 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /0.30 հա/ և փոխանակության գործարքներ՝ 15 միավորի /2.15 հա/:

Հանրապետությունում 2010թ. հունվարին, 2009թ. հունվարի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 12.2%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 33.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 7.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 20.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Լոռու մարզում՝ 212.55 հա, որից 211.27 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 22.7%-ը կամ 198 գործարք /337.73 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 11 գործարք /0.21 հա/, իսկ 76.1%-ը կամ 664 միավորը /262.27 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 28 միավոր /31.89 հա/:

2010թ. հունվարին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 10 գործարք /1.68 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2010թ. հունվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	6	0.14	5	0.07	3	0.34	0	0.00	18	0.82	7	30.73
Արագածոտն	6	4.42	0	0.00	3	0.09	10	0.37	35	24.64	0	0.00	15	1.75	3	0.13
Արարատ	1	3.45	2	0.31	1	0.10	6	0.09	32	21.56	0	0.00	43	3.67	3	0.09
Արմավիր	18	75.83	2	0.52	0	0.00	10	2.42	41	42.09	0	0.00	30	2.74	1	0.01
Գեղարքունիք	0	0.00	1	0.08	14	1.42	9	1.25	27	15.40	0	0.00	19	2.83	0	0.00
Լոռի	16	191.61	0	0.00	3	0.34	12	0.22	31	19.66	0	0.00	6	0.60	0	0.00
Կոտայք	3	8.87	0	0.00	9	0.87	9	0.38	196	29.41	0	0.00	48	4.60	7	1.43
Շիրակ	1	2.75	0	0.00	10	0.30	4	0.53	35	34.64	2	0.19	4	0.67	2	0.05
Սյունիք	4	1.15	0	0.00	2	0.04	7	0.50	7	1.83	1	0.80	11	0.89	1	0.01
Վայոց Ձոր	9	34.76	0	0.00	0	0.00	2	0.09	6	12.73	0	0.00	2	0.13	1	0.05
Տավուշ	0	0.00	0	0.00	5	0.56	3	1.23	16	5.01	0	0.00	4	0.55	3	2.00
Ընդամենը	58	322.84	5	0.91	53	3.86	77	7.15	429	207.31	3	0.99	200	19.25	28	34.50

Ստորև ներկայացվում է 2010թ. հունվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական

նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք											
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտներ ի հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր					
					Բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի			
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	10	0.19	0	0.00	6	0.14	4	0.05	1	0.02	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.02	1	0.02
Արագածոտն	2	0.06	0	0.00	2	0.06	0	0.00	17	4.82	6	4.42	0	0.00	1	0.03	10	0.37	10	0.37
Արարատ	1	0.30	1	0.30	0	0.00	0	0.00	9	3.65	1	3.45	1	0.01	1	0.10	6	0.09	6	0.09
Արմավիր	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	28	78.69	17	75.76	2	0.52	0	0.00	9	2.41	9	2.41
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	24	2.75	0	0.00	1	0.08	14	1.42	9	1.25	9	1.25
Լոռի	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	29	192.16	16	191.61	0	0.00	3	0.34	10	0.21	10	0.21
Կոտայք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	20	10.03	2	8.78	0	0.00	9	0.87	9	0.38	9	0.38
Շիրակ	1	0.06	0	0.00	1	0.06	0	0.00	14	3.52	1	2.75	0	0.00	9	0.24	4	0.53	4	0.53
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	13	1.69	4	1.15	0	0.00	2	0.04	7	0.50	7	0.50
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	11	34.85	9	34.76	0	0.00	0	0.00	2	0.09	2	0.09
Տավուշ	3	1.23	0	0.00	0	0.00	3	1.23	5	0.56	0	0.00	0	0.00	5	0.56	0	0.00	0	0.00
Ընդամենը	20	1.86	1	0.30	9	0.26	10	1.30	171	332.74	56	322.68	4	0.61	44	3.60	67	5.85	67	5.85

Հանրապետությունում 2010թ. հունվարին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 2 գործարք /0.16 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2010թ. հունվարին, 2009թ. հունվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 18.1%-ով: Ընդ որում, Երևանում հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 87.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 15.5%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 30.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 20.0%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 8.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 42.9%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	5	4.00	69.1	832.2	467.6	16	5.98	365.0	12000.0	4370.0
Ապարան						6	5.26	86.5	2727.3	557.5
Թալին	1	0.42	67.5	67.5	67.5	9	7.95	93.6	5494.5	500.0
Մաղկահովիտ						4	5.45	79.5	1000.0	248.2

Արարատի մարզ										
Արտաշատ						6	1.76	335.1	10833.3	2165.6
Մասիս	1	3.45	110.0	110.0	110.0	3	1.08	200.0	11904.8	3030.5
Վեդի						21	18.27	207.0	10795.1	1842.1
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	4.53	122.3	525.0	274.4	22	12.75	294.3	9090.0	1200.0
Բաղրամյան	9	70.45	33.8	622.1	100.0	10	26.72	90.6	2561.1	683.2
Վաղարշապատ	2	0.78	360.0	521.3	440.7	9	2.61	444.4	11764.7	3035.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								199.8	1875.0	432.6
Ճամբարակ						3	0.67	60.5	953.3	258.5
Մարտունի						20	3.24	51.1	2850.0	585.3
Սևան						1	0.98	52.2	2134.8	245.3
Վարդենիս						3	10.51	41.2	2575.1	425.2
Լոռու մարզ										
Ալավերդի						17	5.88	170.4	6424.2	885.5
Գուգարք	15	191.31	44.0	407.0	115.6			234.6	6065.9	1100.0
Սպիտակ	1	0.30	160.0	160.0	160.0	1	0.78	250.0	5555.5	628.2
Ստեփանավան						6	9.44	90.6	1686.6	380.5
Տաշիր						7	3.55	45.3	1384.4	184.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	8.78	201.2	237.2	219.2	174	15.93	279.3	11942.7	4665.6
Եղվարդ						19	12.57	174.4	11971.8	3450.0
Հրազդան						3	0.91	130.5	10256.4	1648.7
Շիրակի մարզ										
Ախուրյան						18	17.70	252.0	1693.1	510.4
Ամասիա	1	2.75	76.0	76.0	76.0			40.9	261.0	132.5
Անի						1	1.39	110.6	546.9	284.1
Աշոցք						6	4.27	58.5	215.8	118.6
Արթիկ						5	2.64	79.4	1428.6	255.8
Սյունիքի մարզ										
Գորիս	3	0.95	550.0	550.0	550.0			92.6	1023.2	502.5
Կապան								120.0	841.6	290.6
Մեղրի	1	0.20	6300.0	6300.0	6300.0			193.0	3000.0	600.0
Սիսիան						7	1.83	46.3	1977.4	302.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	30.96	37.1	45.0	39.3	6	12.73	125.0	10000.0	1555.5
Վայք	2	3.80	68.8	176.8	122.8			58.8	1430.7	513.4
Տավուշի մարզ										
Բերդ						6	0.48	213.3	3783.8	535.6
Իջևան						6	1.57	267.5	9454.5	1065.5
Նոյեմբերյան						4	2.96	46.7	7368.4	787.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին

Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	293.0	194.5	194.5	194.5	15	17505.0	130.7	22200.0	2572.0
Ապարան								124.1	609.6	260.4
Թալին								63.2	1454.8	140.0
Ծաղկահովիտ								60.0	214.3	77.8
Արարատի մարզ										
Արտաշատ	1	1000.0	820.0	820.0	820.0	8	8720.0	173.9	7140.3	893.0
Մասիս						20	12230.0	187.5	25000.0	1216.8
Վեդի						15	15763.0	126.1	5000.0	661.3
Արմավիրի մարզ										
Արմավիր						10	10243.0	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						3	3300.0	100.0	833.3	182.0
Վաղարշապատ						16	13234.0	197.4	26528.4	1533.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						9	12620.0	186.6	1084.3	455.0
Ճամբարակ	2	1600.0	126.0	126.0	126.0	1	200.0	71.3	2286.2	137.2
Մարտունի	3	1944.0	119.0	248.7	162.2	7	9850.0	119.3	5000.0	274.0
Սևան	9	10639.0	113.3	466.0	300.8	1	3000.0	240.0	3110.4	226.0
Վարդենիս						1	2652.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Այվերդի						2	2620.0	114.3	1388.9	203.5
Գուգարք						1	1000.0	77.9	14083.3	758.5
Սյուխակ	2	2880.0	49.6	49.6	49.6	2	2230.0	104.9	1348.3	198.2
Ստեփանավան	1	500.0	82.8	82.8	82.8	1	124.0	88.2	1666.7	145.3
Տաշիր								45.3	400.0	76.6
Կոտայքի մարզ										
Աբովյան						15	17439.0	264.5	35353.5	2037.5
Եղվարդ	5	5426.0	1485.0	3127.5	2796.5	31	26516.0	173.6	27000.0	2865.2
Հրազդան	4	3266.0	537.0	3234.0	1212.5	2	2000.0	117.7	34848.5	1341.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	8	1843.0	363.7	3240.7	1697.5	2	1780.0	113.6	18750.0	330.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի								67.9	180.6	123.2
Աշոցք						1	4480.0	40.8	144.0	60.0
Արթիկ	1	600.0	555.2	555.2	555.2	1	400.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						3	1737.0	112.2	1700.0	295.5
Կապան	2	409.0	660.0	1047.5	853.8	3	2485.0	67.9	2638.9	238.5
Մեղրի						2	1550.0	68.5	632.9	147.3
Միսիան						3	3107.0	123.5	875.0	162.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	1040.0	96.7	7659.6	415.1
Վայք								120.7	1448.3	157.2
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	97.2
Իջևան	4	4510.0	1495.0	1800.0	1686.3	4	5490.0	74.1	14423.1	479.3
Նոյեմբերյան	1	1100.0	380.0	380.0	380.0			125.0	1948.1	163.0

2010թ. հունվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 9 գործարքներ 2.52 հա մակերեսով, ընդ որում 8-ը՝ Գեղարքունիքի /2.34 հա/, 1-ը՝ /0.18 հա/ Լոռու մարզերում:

2010թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 555 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 79.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2010թ. հունվարին, 2009թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 58.2%-ով, իսկ 2009թ. հունվարի համեմատ՝ 22.4%-ով:

2010թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 33 բնակարանների, 15 անհատական բնակելի տների, 192 հասարակական, 27 արտադրական նշանակության օբյեկտների, 258 միավոր /876.28 հա/ հողերի և 30 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2010թ. հունվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 5 վարձակալության գործարքների /այդ թվում 1 միավոր՝ 0.002 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2009թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 50.0%-ով, իսկ 2009թ. հունվարի համեմատ՝ 66.7%-ով: 2010թ. հունվարին հանրապետությունում վարձակալված 876.28 հա հողերից 0.14 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 876.13 հա հողերի 555.07 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 23.30 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 612.66 հա, որից 5.00 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 12.63 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2010թ. հունվարին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	1	12.63	0	0.00
Արարատ	0	0.00	0	0.00
Արմավիր	0	0.00	3	20.96
Գեղարքունիք	0	0.00	29	22.69
Լոռի	0	0.00	3	19.99
Կոտայք	0	0.00	1	1.00
Շիրակ	0	0.00	81	168.66
Սյունիք	0	0.00	3	5.00
Վայոց Ձոր	0	0.00	1	0.16
Տավուշ	0	0.00	4	7.13
Ընդամենը	1	12.63	125	245.59

2010թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 707 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.7%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 72.4%-ով, իսկ 2009թ. հունվարի համեմատ աճել՝ 75.0%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /34.9%/, առանձնատների /17.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.5%/ և հողերի /28.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում

անշարժ գույքի նկատմամբ իրականացված 246 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2009թ. դեկտեմբերի համեմատ, նվազել է 76.5%-ով, իսկ 2009թ. հունվարի համեմատ աճել՝ 11.3%-ով:

2010թ. հունվարին հանրապետությունում գրավադրվել են 137.87 հա հողեր, որից 0.50 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 58.1%-ը կամ 80.14 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.31 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Կոտայքի մարզում՝ 74.12 հա, որից 16.82 հա գյուղատնտեսական:

2010թ. հունվարին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 47 գործարքներ, որից 28-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 72.3%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 23.4%-ն՝ անհատական բնակելի տների և 4.3%՝ հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ: 2009թ. դեկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 75.8%-ով, ընդ որում Երևանում՝ 80.6%-ով, իսկ մարզերում՝ 62.0%-ով: 2009թ. հունվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 3.6 անգամ, ընդ որում Երևանում՝ 2.5 անգամ, մարզերում՝ 9.5 անգամ:

2010թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 1 և 2 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.04%: Մասնավորեցման գործարքների քանակը, 2009թ. դեկտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ իսկ 2009թ. հունվարի համեմատ նվազել է 25.0%-ով: 2010թ. հունվարին մասնավորեցման գործարքներից 1-ական գործարք արձանագրվել են Գեղարքունիքի, Շիրակի և Լոռու մարզերում:

2010թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 984 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2009թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 61.0%-ով, իսկ 2009թ. հունվարի համեմատ՝ 15.1%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /32.5%:

*Տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին*